ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի թիվ 338-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Գևորգ Գրիգորյանի դիմումը՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. անշարժ գույքի Չկալովկա հասցեում գտնվող /վկայական՝ 04022025-05-0012/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Չկալովկա հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Չկալովկա 4-րդ փողոց թիվ 11 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի թիվ 339-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Սևան ձկնաբուծական գործարան» ԲԲԸ-ի տնօրեն Կոլյա Հայրապետյանի դիմումը՝ սեփականության իրավունքով ընկերությանհը պատկանող, Սևան համայնք, ք.Սևան, Ձկնորսների փողոց, թիվ 13 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 21072021-05-0016/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք.Սևան, Ձկնորսների փողոց թիվ 13 հասցեում գտնվող 18.4295հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 18.37921 հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ձկնորսների փողոց թիվ 13 արտադրամաս հասցե;

2) երկրորդ միավոր գույքի՝ 0.05036 հա մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ձկնորսների փողոց թիվ 13 / 7 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի թիվ 340-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հեղինե Աբրահամյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 160 / 21, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 4 / 11, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 4 / 12 հասցներում գտնվող անշարժ գույքերը /վկայական՝ 30082022-05-0069, 03022025-05-0073, 08062023-05-0066/ միավորելու և միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 160 / 21, Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 4 / 11, Սևան համայնք ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 4 / 12 հասցներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 4 / 11 պարիսպ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի թիվ 341-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ն.Ա.Պրադակշն» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Ներսեսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ թիվ 1 / 26, Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ թիվ 24, Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ թիվ 30 հողամաս հասցներում գտնվող անշարժ գույքերը /վկայական՝ 29112023-05-0107, 17062024-05-0045, 13062024-05-0085/ միավորելու և միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ թիվ 1 / 26, Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ թիվ 24 և Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ թիվ 30 հողամաս հասցներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ թիվ 24 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի թիվ 342-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Աննա Թորոսյանի լիազոր անձ Ռաֆֆի Գրիգորյանի դիմումը՝ սեփականության իրավունքով Աննա Թորոսյանին պատկանող, ք. Սևան, Սևան քաղաքից հարավ հատված թիվ 5 / 9 հասցեում գտնվողանշարժ գույքի /վկայական՝ 2037553, տրված՝ 16.05.2007թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Սևան քաղաքից հարավ հատված թիվ 5 / 9 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք ք. Սևան, 3-րդ փողոց թիվ 4 / 9 հանգստյան տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի թիվ 343-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 164 հասցեում գտնվող Սևանի համայնքապետարանի վարչական շենքի 3-րդ հարկից 16.6քմ տարածքը / վկայական՝ 10092014-05-0005/5 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Կարեն Մանվելի Հովսեփյանին՝ որպես աշխատանքային գրասենյակ:
2. Վարձակալության վճարը սահմանել Սևան համայնքի ավագանու՝ 17.12.2024թ. թիվ 174-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափին համապատասխան՝ տարածքի 1քմ՝ տարեկան 5000 դրամ:
3. Կարեն Հովսեփյանի հետ կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման: Պետական գրանցման ծախսերը կատարում է վարձակալը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի թիվ 344-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Աբրահամ Աբրահամյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 36 / 3 հասցեում գտնվող անշարժ գույքը / վկայական՝ 31012025-05-0055/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 36 / 3 հասցեում գտնվող 3.25598հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) եռաջին միավոր գույքի՝ 2.87813հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 36 / 3 հողամաս հասցե;
2) երկրորդ միավոր գույքի՝ 0.37785հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 36 / 5 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2025 թվականի թիվ 345-Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 34-րդ, 37-րդ հոդվածների, ՀՀ կառավարության՝ 02.06.2016թ. N631-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ/0456/02/24 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ անձին անգործունակ ճանաչելու մասին, հաշվի առնելով Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 6 փողոց, տուն 17 հասցեի բնակիչ Դավիթ Մկրտչյանի դիմումը՝ խնամակալություն սահմանելու մասին, նկատի ունենալով Սևանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը, **որոշում եմ.**

1. Խնամակալություն սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ/0456/02/24 վճռով անգործունակ ճանաչված Վահե Դավթի Մկրտչյանի նկատմամբ /ծնված՝ 28.09.2006թ., ծննդյան վկայական՝ ԱԱ123333/ և Դավիթ Սամվելի Մկրտչյանին (ծնված՝ 04.11.1983թ., Ն/Ք 015044290, տրված՝ 16.06.2023թ., 050-ի կողմից) ճանաչել նրա խնամակալ:
2. Պարտավորեցնել խնամակալ Դավիթ Մկրտչյանին՝ հոգալ իր խնամարկյալի ապրուստը, ապահովել նրա խնամքն ու բուժումը, պաշտպանել նրա իրավունքներն ու շահերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 17
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2025 թվականի թիվ 346-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սուրեն Ղազարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 600քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Սուրեն Սոսի Ղազարյանին /ծնված՝ 11.11.1956թ./ պատկանող, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 600քմ հողատարածքին կից՝ 300քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Սուրեն Ղազարյանի սեփականության իրավունքը:
2. Սուրեն Ղազարյանին պատկանող 900քմ մակերեսով հողատարածքում 1958թ. կառուցված 124.58քմ մակերեսով բնակելի տան /ներքին մակերեսը՝ 91.02քմ/, 29.05քմ մակերեսով նկուղի /ներքին մակերեսը՝ 13.35քմ/, 23.57քմ մակերեսով տնտեսական շինության /ներքին մակերեսը՝ 16.79քմ/, 42.29քմ մակերեսով ավտոտնակի /ներքին մակերեսը՝ 34.14քմ/ և 1.71քմ մակերեսով աստիճանահարթակի նկատմամբ ճանաչել Սուրեն Ղազարյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 բնակելի տուն հասցե:
3. Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 900քմ մակերեսով հողատարածքում 2005թ. կառուցված 10.91քմ մակերեսով խորդանոցը, 13.11քմ մակերեսով ծածկը և 1.10քմ մակերեսով պարիսպը ճանաչել ինքնակամ շինություն:
4. Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 900քմ մակերեսով հողատարածքում 54.0քմ մակերեսով շինության քանդման աշխատանքները ճանաչել օրինական:

5. Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 900քմ մակերեսով հողատարածքին կից՝ 50քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 /1 հասցե, ուղղակի վաճառքի կարգով օտարել Սուրեն Սոսի Ղազարյանին հողի կադաստրային արժեքը վճարելու պայմանով /1քմ 2887.5 դրամ/:
6. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
7. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 17
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2025 թվականի թիվ 347-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 17.01.2025Թ. N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 17.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 109-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «0.04497հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0.05497հա մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 17
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2025 թվականի թիվ 348-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2025թվականի բյուջեի համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 1 դաս 1, հոդված 4222՝ Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր/ փոխանցել 286333 դրամ՝ Հունգարիայի Հանրապետություն պատվիրակություն գործուղելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 17
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2025 թվականի թիվ 349-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, Սևան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում 2025թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝

1) կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը:
2) հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:

3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 17
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2025 թվականի թիվ 350-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սևան համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել ՝
1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը ՝ համաձայն հավելված N 1-ի,
2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 17
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի թիվ 351-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Վիկտորյա Գեղամյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 46 հասցեում կառուցված 35.7քմ մակերեսով ավտոտնակը և զբաղեցրած 35.7քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 46 հասցեում գտնվող, Սևանի համայնքի ղեկավարի՝ 07.08.2024թ. թիվ 1751-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 10.02.2025թ. պետական գրանցում ստացած 35.7քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, զբաղեցրած 35.7քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած Վիկտորյա Գեղամյանին :
2. Քաղ Վիկտորյա Ռոբերտի Գեղամյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 18
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի թիվ 352-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 31.01.2025Թ. N 206-Ա ԵՎ 07.05.2025Թ. N 269-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝31.01.2025թ. «Հողհատկացման հիմքերը վերակագնելու մասին» N 206-Ա և 07.02.2025թ. «Սևան համայնքի ղեկավարի՝ 07.02.2025թ. N 206-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» 269-Ա որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 18
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի թիվ 353-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ և հիմք ընդունելով քաղ. Սամվել Խաչատրյանի դիմումը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց, 15 շենք թիվ 25 և Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց, 15 շենք թիվ 15 հասցներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝ 03022025-05-0062, 10122024-05-0155/ միավորելու և միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց, 15 շենք թիվ 25 և Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց, 15 շենք թիվ 15 հասցներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Սյունյաց փողոց, 15 շենք թիվ 15 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 18
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի թիվ 354-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-079-0136-0001 կադաստրային ծածկագրով /գ. Սեմյոնովկա/, 0.40613հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 18
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի թիվ 355-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Տիգրան Քոչարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Նաիրյան փողոց, 181 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 1 հասցեում գտնվող բնակարանին կից ինքնակամ կառուցված 12.30քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Քաղ. Տիգրան Արշավիրի Քոչարյանի կողմից՝ ք. Սևան, Նաիրյան փողոց, 181 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 1 հասցեում գտնվող բնակարանին կից ինքնակամ կառուցված 12.30քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունը /ներքին մակերեսը՝ 7.29քմ/, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 12.3քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Տիգրան Քոչարյանի կողմից ինքնակամ կառուցված 12.30քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20233UCYYE/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց, 181 շենք թիվ 53 բնակարան հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են՝ ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 18
ք.Սևան

Հաստատված է
Սևան համայնքի ղեկավարի
« 17 » փետրվարի N349-Ա որոշմամբ

Կ Ա Զ Մ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

h/h	Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը	Զբաղեցրած պաշտոնը, զբաղմունքը	Հանձնաժողովում կարգավիճակը
1.	Սուրեն Համբարձումյան	Համայնքի ղեկավարի օգնական	Հանձնաժողովի նախագահ
2.	Դավիթ Թորոսյան	Համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ	Հանձնաժողովի նախագահի տեղակալ
3.	Նարինե Հարությունյան	Համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի պետ	Հանձնաժողովի քարտուղար
4.	Նելլի Ավետիսյան	Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ	Հանձնաժողովի անդամ
5.	Անի Աբրահամյան	Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի անդամ
6.	Խաչիկ Թորոսյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
7.	Նարե Ղազարյան	«Սևան համայնքի Վ. Ստեփանյանի անվան ԳԿՀ» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ	Հանձնաժողովի անդամ
8.	Լիլիթ Մարգարյան	«Սևան» Երիտասարդական ակումբ» ՀԿ-ի ներկայացուցիչ	Հանձնաժողովի անդամ
9.	Լիաննա Ներսիսյան	Համայնքի ակտիվ բնակիչ	Հանձնաժողովի անդամ
10.	Արթուր Մելքոնյան	Կամավոր	Հանձնաժողովի անդամ
11.	Կարինե Զոհրաբյան	Կամավոր	Հանձնաժողովի անդամ

Հաստատված է
Սևան համայնքի ղեկավարի
« 17 » փետրվարի N349-Ա որոշմամբ

ՀԱՅՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

1	**Առաջարկի հեղինակի անուն,ազգանուն /անվանում/**	
2	**Կոնտակտային տվյալներ** /հասցե, հեռախոս, էլ.փոստ/	
3	**Առաջարկի անվանումը, նկարագրությունը**	
4	**Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը**	
5	**Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները**	
6	**Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները**	

Հաստատված է
Սևան համայնքի ղեկավարի
« 17 » փետրվարի N349-Ա որոշմամբ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

N	Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ	Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները)	Պատասխանատու եվ կատարողներ	Աջակցող թիմակիցներ	Ժամկետներ
1	Նախապատրաստական փուլ	1. 2. 3. …			
2	Իրազեկման փուլ	1. 2. 3. …			
3	Առաջարկների ներկայացման փուլ				
4	Առաջարկների նախնական գնահատման փուլ				
5	Հանրային քննարկումների և լսումների փուլ				
6	Իրականացման փուլ				
7	Հաշվետվության փուլ				

Հավելված 4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

Իրազեկման արշավի ձևը *(ընտրել միայն իրականացված տարբերակները)*	**Արշավի իրականացման մանրամասները և ընդգրկման շրջանակը**
Համայնքապետարանների պաշտոնական էլեկտրոնային կայքում համապատասխան տեղեկության ներկայացում	• *Տեղեկատվության հրապարակման ամսաթիվը* • *Կայքի համապատասխան բաժին այցելությունների քանակը* • *Տեղադրել հղումները*
Սոցիալական ցանցերում տեղեկատվության ներկայացում	• *Տեղեկատվության հրապարակման ամսաթիվը* • *Տեղադրել հղումները*
ԶԼՄ-ների՝ ռադիոալիքների, թերթերի, հեռուստաալիքների օգնությամբ տարածում	• *Նշել ԶԼՄ-ների անունները* • *Ներկայացնել արշավի բովանդակությունը* • *Տեղադրել հղումները*
Տպագիր նյութերի՝ բուկլետների, թռուցիկների միջոցով տարածում	• *Տպագրված նյութերի քանակը* • *Տարածման վայրերը*
Պաստառների և ցուցատախտակների միջոցով տարածում	• *Պաստառների և ցուցատախտակների քանակը* • *Տեղադրման վայրերը*
Փողոցային հանդիպումներ	• *Բնակավայրերը, որտեղ իրականացվել են հանդիպումները* • *Հանդիպումների քանակը* • *Հանդիպումների մասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Այցեր բնակարաններ	• *Բնակավայրերը, որտեղ իրականացվել են այցերը* • *Տնային այցերի քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Հեռախոսազանգեր	• *Հեռախոսազանգերի քանակը*
Տարբեր հանրային վայրերում, կազմակերպություններում հանդիպումներ	• *Հանրային վայրերը, որտեղ իրականացվել են հանդիպումները* • *Հանդիպումների քանակը* • *Հանդիպումների մասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Տեղական ինքնակառավարման մարմինների, վարչական ղեկավարների նստավայրերում ժողովներ, լսումներ և քննարկումներ	• *Հանրային լսումների/քննարկումների քանակը* • *Հանրային լսումների/քննարկումների մասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
Վարչական ղեկավարների նստավայրերում ժողովներ, լսումներ և քննարկումներ	• *Բնակավայրերը, որտեղ իրականացվել են քննարկումները* • *Քննարկումների քանակը* • *Քննարկումների մասնակիցների քանակը* • *Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները*
. . .[1]	

[1] Առկայության դեպքում ավելացնել կիրառված իրազեկման այլ ձևերը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[2] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	**Առաջարկի անվանումը**	**Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)**	**Առաջարկի կարգավիճակը** • *Ընդունվել է* • *Մերժվել է*	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.				
2.				

[2] Աղյուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկի անվանումը	**Քվեարկության արդյունքում հավաքած ձայների քանակը**	**Ծրագրի կարգավիճակը** • *Հաղթող ծրագիր (քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը հաղթահարած)* • *Իրականացվող ծրագիր, մեկնաբանություն ֆինանսավորման աղբյուրների մասին* • *Չհաղթած ծրագիր*
Քվեարկության մասնակիցների ընդամենը քանակ		

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ծրագրի անվանումը	
Ծրագիրը ներկայացնողի անուն/ազգանունը	
Ծրագրի բովանդակությունը	
Ծրագրի բյուջեն	
Իրականացման վայրը	
Շահառուների քանակը	
Իրականացման ժամանակահատվածը/սկիզբ-ավարտ/	
Ծրագրի միջոցառումները, ըստ իրականացնող մարմինների/կազմակերպությունների	
Հիմնական արդյունքային չափորոշիչները	
Հղումներ կայքում առկա տեսադարանին/նկարներին[3]	
Այլ կարևոր ծրագրային մանրամասներ	

Հավելված N 1
Սևան համայնքի ղեկավարի
«17» փետրվարի 2025թ. N 350-Ա որոշման

ԿԱԶՄ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Սարգիս Մուրադյան /համայնքի ղեկավար/
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Արթուր Մարգարյան / համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ/
3. խորհրդի քարտուղար՝ Արմենուհի Ղուկասյան
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանու անդամ Ռոբերտ Խաչատրյան
2) ավագանու անդամ Խաչիկ Թորոսյան
3) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ **Սուրեն Մելիքյան** /ՀՀ ՆԳՆ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Սևանի ՀՓՋ-ի հրամանատար, փրկարարական ծառայության փոխգնդապետ (համաձայնությամբ),

բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Սևանի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ **Վազգեն Կիրակոսյան** (համաձայնությամբ),

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Սևան համայնքի ղեկավարի խորհրդական **Արման Հարությունյան**,

դ. կապի պատասխանատու՝ «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի «Սևան» մ/ճ-ի ղեկավար **Հայկ Մուրադյան** (համաձայնությամբ),

ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն **Արամ Նիկողոսյան** (համաձայնությամբ),

զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ **Հայկ Ղուկասյան,**

է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ «ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մ/ճ Սևան էլ.ցանցի պետ **Կարեն Սարկիսսյան** (համաձայնությամբ),

ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ **Մեսրոպ Մկրտչյան**,

թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն **Էդգար Հարությունյան**,

ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի պետ **Նարինե Հարությունյան**:

Հավելված N 2
Սևան համայնքի ղեկավարի
«17» փետրվարի 2025թ. N 350-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Սևան համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:
2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Սևանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:
3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:
4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:
5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:
6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,
2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,
3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,
4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,
5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,
6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,
7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,
8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,
10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,
11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,
12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,
13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը
14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,
2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,
3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,
4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,
5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,
6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,
7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,
8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,
9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,
10) առաջին օգնության իրականացման ապահովումը,
11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,
12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,
13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,
14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,
15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,
16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,
18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,
19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,
20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին: